

էր ուղարկել, բայց Տ. Փոխարքայից այս օրերում Ռինոգի միջնորդութեան բացառական պատասխան գալու պառաճառավ, աւելորդ համարեցաւ այլ ևս ուղարկել, այն ինչ լուրն արդէն տպուած էր թերթում:

Ամսոյս 16-ին Մ. Աթոռի ճեմարանում գրական-գեղարուեատական երեկոյթը էր սարքուած Հայրիկի և Պոօշեանցի յիշատակին։ Հանդէսն սկսուեցաւ հայոց մատենագրութեան ուսուցիչ պ. Մ. Արեգեանցի բանախօսութեամբ։ Պ. Արեգեանցը հակիրճ, բայց բնորոշ և պարզ կերպով ներկայացրեց Հայրիկի գէմքն ու գործունէութիւնն ըստ հայ բանաստեղծների՝ գլխաւորապէս Բաֆֆու և Պոօշեանի։ Իսկ պ. Բերբերեանը բնորոշեց Պոօշեանցի տեղը մեր նորագոյն գրականութեան մէջ և նորա նշանակութիւնը իբրև վիպասան երկու բանաստեղծ ուսուցիչներ՝ պ. Յ. Յավհաննիսեան և պ. Յարութիւն Պետրոսեան մի մի ստանաւոր կարդացին՝ հանգուցեալ հեղինակների յիշատակներին։ Պ. Պետրոսեանի բանաստեղծութիւնը տպուած է ներկայ համարում։ Երկու աշակերտ ևս՝ Քոչարեան Ա. Գրդ գասարանցի և Բաղրեան Ստ. ինքնուրոյն ստանաւորներ կարդացին, որ հասարակութիւնն ու աշակերտութիւնը ծափահարութեամբ ընդունեց ի վերջոյ պ. Կ. Մելիք-Շահնազարեանց՝ Տմբլաչի Խաչանը՝ կարդաց իւր «Յինչու իըրա ընք» յօդուածը, հումորով լի մի քննադատական՝ մեր նորագոյն «սոցիալական» շարժումների և երեսութների մասին։ Մէջ է մէջ երգում էր հ. Կոմիտասի խումբը, ինքն էլ հ. Կոմիտասը գաշնամուրի աջակցութեամբ զգացմանքով երգեց «Սիրտս նման է» անտունի երգը, իսկ նորա աշակերտը՝ Ա. լուարանի ուսանող՝ Խոսրով Փախչանեանց՝ գաշնակով աջակցեց իւր գրի տուած և գաշնակած «Կայնել եմ՝ գալ չեմ՝ կարող» ժողովրդական երգը։ Մաղաթեան Համբարձումը շատ յաջող կերպով կարդաց Պոօշեանից «Ուսումնարան» հատուածը։

Ամբողջ երեկոյթը հանդիսականների վերայ թողեց լաւ տպաւորութիւն։ Ճեմարանի երկար ժամանակեայ

շփոթուած կեանքից յետոյ՝ նորան դարձեալ տեսնել բարեկարգ և իրեն վայել վիճակում, ամենքի տեհնչն է։ Ցանկանք, որ նկատուած լաւ նշանները աւելի ևս զարգանան և յարատե լինին։

Անցեալ համարում յայտնել էինք, որ կարապետ ծ. վարդապետն ընտրուած է միաձայն Ատրպատականի առաջնորդ։ Հոկտեմբերի 23-ին Թաւրիզի պատգամաւորների հետ ճանապարհ ընկաւ նա իւր նոր պաշտօնատեղին։

Ա. Հայրապետի մահուամբ անկարելի է այժմ իրագործել «Արարատը» շաբաթաթերթ գարձնելու միաբը, որի մասին հազորդել էինք անցեալ անդամ։ Այդ լանդիրը կմայ նորընտիր Հայրապետի անօրէնութեամբ լուծել, Սակայն Էջմիածնում խմբուած գրական ուժերը՝ միաբանութիւնից և ճեմարանի ուսուցչական խմբից՝ կաջակցեն թերթիս յառաջադիմութեան, Եկող յունուարից «Արարատը» կհրատարակուի երկու բաժնով. ա) պաշտօնական-կրօնական-եկեղեցական, և բ) գրական-բանասիրական-մանկավարժական։ Բացի հեռու և մօտ հին աշխատակիցներից՝ անմիջապէս կմասնակցեն հ. հ. Յուսիկ, Երուանդ. և Լեռն վարդապետները, միաբանը, իսկ ճեմարանի ուսուցիչներից պ. պ. Ռերբերեան, Արեգեան. Յ. Յովհաննիսեան, Յ. Պետրոսեան, Խոստիկեան, Սամուելեան և Մնացականնեան, ինչպէս և պ. Կ, Մելիք-Շահնազարեան՝ Տմբլաչի Խաչանը։

Ա. Սինոդը Օր. XI. հատ. I մ. 1119 և 1120 յօդուածների համաձայն նոր կաթուղիկոսի ընտրութեան օրը նշանակելով 1908 թ. հոկտ. 30-ին, ծանուցողական հրովարտակներ է ուղարկել Ռուսաստանի և արտասահմանի Հայոց բոլոր թեմերին։ Ռուսաստանի առաջնորդներին Սինոդն ուղարկել է ծանուցագրերն անմիջապէս, իսկ արտասահմանի թեմերին Տ. Փոխարքայի գիւտանի միջու